

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Հարգելի աշակերտներ, ուսուցիչներ, ծնողներ, կրթության ոլորտի աշխատակիցներ, սիրով շնորհավորում եմ բոլորիդ գիտելիքի օրվա և նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:

2016-2017-ուսումնական տարվա առաջին զանգը ազդարարում է ևս մեկ սերնդի մուտքը գիտելիքների աշխարհ և նոր կյանք:

Սիրելի՛ աշակերտներ, հուսով եմ պատվով կկատարեք Ձեր պարտականությունները. այն է սովորել, գիտելիքներ ձեռք բերել, դառնալ մեր երկրին պիտանի մարդ:

Համոզված եմ, որ ձեր ունակություններն ու հմտությունները պիտի ծառայեն մեր քաղաքի ու երկրի զարգացմանը ու շենացմանը, պետականության ամրապնդմանն ու հզորացմանը:

Սիրելի՛ մանկավարժներ, գնահատելով ձեր տքնաջան, միաժամանակ պատվաբեր աշխատանքը, ցանկանում եմ, որ միշտ լինեք ձեր սաների կողքին: Ձեր անսահման եռանդն ու ավյունը, խորհուրդներն ու իմացությունը ծառայեցնեք ի շահ մեր երեխաների:

Ողջ համայնքի անունից սրտանց շնորհավորում եմ բոլորիդ, մաղթում՝ ամենայն բարիք և հաջողություն:

Մասիսի քաղաքապետ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Մասիս 2016թ.

